

ՀՈՒՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՐԳԱՐՏԱԾԱՂԿԻ

ՅԵՎ

ԼՈՒՍԱՏԻՏԻԿԻ

ՀԵՔՅԱԹԸ



391.99
9-79

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՈՍՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ

1937



1024
37



ՀՈՒՓՍԻՍԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՐԳԱՐՏԱԾԱՂԿԻ ՅԵՎ ԼՈՒՍԱՏԻՏԻԿԻ ՅԵՔՅԱԹ


Այնտեղ հեռու, մարգագետնում:
Ուր արեվն է դարնան փալում,
Ուր վոր գետի ջրին արծաթ
Ջինջ լեռկինքն է նալում անթարթ
Ուր սոճին է կանաչադարդ
Յեվ մասրենին խիտ փշապատ,
Վորքան ծաղիկ այս գարունքին
Հասակ առան իրար կողքի:



Յերիցունն աստղածեփ,
 Յերեքնուկը լերեք թեփ,
 Կանաչներում տարուբեր,
 Մեղմ որորվող կալաչներ,
 Անմոռացուկ լերկնագուն,
 Վոր հասկերում վոսկեգուն
 Որորվում ե թագնված,
 Կապույտ շորերը հագած,
 Ծաղկանց միջին անհամար
 Ծլեց ծաղիկ անթառամ:

Մի ծաղիկ՝
 Հրաշալիք,
 Ինչպես ձյունի մի փաթիլ,
 Բոլորի մեջ մի հատիկ,
 Գլխին փափուկ մի գլխարկ,
 Վստն ել լերկար ու բարակ,
 Մարգագետնում ալն կանաչ
 Միայն քամուն եր ճանաչ:





Քամին անցավ լալն դաշտերով,
 Ու մի խխունջ տեսավ շուտով,
 Վոր տնակն իր շալակած,
 Դանդաղ սողում էր դեպի ցած:
 Քամին պատմեց ծաղկի մասին
 Դանդաղաշարժ ալի խխունջին:
 Սա լել լուրը որվա կեսին
 Տարավ, հասցրեց սեվ բզեզին:
 Իսկ բզեզն ել իրեն հերթին
 Վողջը պատմեց միջատներին,
 Ճպուռներին ու ճանճերին,
 Մոծակներին, թիթեռներին,
 — Թե ծաղկանց մեջ անհամար՝
 Բացվեց ծաղիկ անթառամ:
 Մի ծաղիկ՝
 Հրաշալիք,
 Ինչպես ձյունի մի փաթիլ,
 Բոլորի մեջ մի հատիկ:
 Գլխին փափուկ մի գլխարկ,
 Վրան ել լերկար ու բարակ:



Ահա սաղաֆ թեվերը բաց,
 Ալի նոր ծաղկի մոտ հավաքված,
 Ճպուռների անհոգ մի խումբ
 Յերգ և ասում, հետն ել խաղում:
 Թիթեռները զուգ թեվերով
 Մեղմ փարվում են ծաղկի վզով:
 Ծղրիղների ամբողջ մի գունդ
 Թռչկոտում և ալստեղ անփուլթ:
 Գարնանային լուսաբացին
 Միջատներն են լեկել այցի:
 Ճերմակ ծաղկին նրանք սիրով
 Վողջունում են ամբողջ խմբով:



Ամեն մեկը նրան դիմում,
 Հետն ել այսպես անուշ խոսում.
 — Դու ծաղիկ՝
 Հրաշալիք,
 Ինչպես ձյունի մի փաթիլ,
 Բոլորի մեջ մի հատիկ.
 Դիտի՞ փափուկ մի գլխարկ,
 Վոտդ ել լերկար ու բարակ:
 Դու ճոխ զարդն ես մարգերի,
 Դե, ինձ սիրի, դե, սիրի:
 Ձե, լես լավ եմ բոլորից,
 Նախշուն, սիրուն ամենքից:
 Իրենց գովում են այսպես
 Միջատները անյերես:
 Մեկը մյուսին բամբասում,
 Վատաբանում ե, խոսում:
 Իսկ ծաղիկը նրանց համար
 Մի պատասխան ունեւ հարմար:




— Անկոչ հյուրեր, զուր եք խոսում,
 Յես արեւի լույսն եմ սիրում:
 Յեւ ձգվում ե վողջ հասակով,
 Արեւին նայում սիրով,
 Վառ շողերին փարվում ուժգին,
 Շիկնում, թեքվում դեպի գետին:
 Յերբ մարգերի վրա անծայր
 Մութ գիշերն եր իջնում կամաց,
 Անթառամն եր այն ժամ տխրում,
 Աչիկները ցողոտ թարթում:
 Ապա դիմում իր հյուրերին,
 Այն պարծենկոտ միջատներին:
 — Ո՞վ կարող ե գիշերը սեւ
 Լուսավորել լույսով թեթեւ,
 Ո՞վ կհաղթի այս խավարին
 Նա կլինի իմ սիրելին:



* *
 Միջատները լերք լսեցին,
 Սպիտակ ծաղիկն մենակ թողին,
 Խիստ պարծենկոտ բզրոցներով,
 Զոկ-ջոկ ամբողջ խմբով,
 Թռան արագ, թռան թեթեւ,
 Գետի ափն կողմ, սարի լեռն
 Դեպի գլուղեր, դեպի քաղաք,
 Վոր շուտ գտնեն անմար կրակ:

* *
 Հեռուներում, մարգագետնում
 Ուր ծաղիկն է հեզ ուրբովում
 Մի ծաղիկ՝
 Հրաշալիք,
 Մութ գիշերվա ուշ պահին
 Այցի լեկավ ախ ծաղիկն
 Լուսատիտիկն անճանաչ,
 Պոչին կրակ վառ-կանաչ:

Դա մի հյուր էր շատ համեստ,
 Չճառող ու միշտ պարկեշտ,
 Վոր բերել էր լույս ու փայլ,
 Քշել խավարը մռայլ:
 Յեվ ծաղիկը զարմացած
 Բացեց աչքերը ցողաթաց,
 Ուր սիրեց նա հեզ հյուրին,
 Կանաչափայլ միջատին:
 Մտեմացան այդ որից,
 Միշտ անբաժան իրարից,
 Նրանք ուրախ ապրեցին
 Յեվ խավարը ցրեցին:
 Նրանց շուրջը լույս ու փայլ,
 Չկար գիշերը մռայլ:



Այն խխունջն ել անգոր
 Զարմանում եր շատ իզուր,
 Թե ինչպես մի լուռ միջատ,
 Ցերեկները՝ գորշ, անհայտ,
 Գիշերներն եր միշտ վառվում
 Ու զմրուխտի պես փայլում:
 Միջատները ճամբին վոլոր,
 Գիշերներով հոգնած, մոլոր,
 Շատ փնտրեցին մի լույս անմար,
 Այն սիրունիկ ծաղկի համար:
 Հենց տեսնելին փայլող ճրագ,
 Կամ մի ուրիշ վառվող կրակ,
 Խիստ պարծենկոտ բզզոցներով,
 Զոկ-ջոկ և ամբողջ խմբով,
 Հասնում ելին, վրան թռչում,
 Անփուլթ, անզգուշ իրար հրում
 Յեւ թեվերով լույսը մարում
 Նորից մնում գորշ խավարում:
 Իսկ այն կանաչ մարգագետնում:
 Ուր ծաղկում ե ու փթթում
 Մի ծաղիկ՝
 Հրաշալիք,
 Ինչպես ձյունի մի փաթիլ,
 Բոլորի մեջ մի հատիկ:
 Գլխին փափուկ մի գլխարկ,
 Վոտն ել լերկար ու բարակ,
 Ուներ ընկեր մի համեստ,
 Զճառող ու միշտ պարկեշտ,
 Լուսատիտիկ անունով,
 Վոր սեփական իր լույսով,
 Շուրջը խավարն ե ցրում,
 Վայժառ մի լույս տարածում:



Տեխ. խմբագիր՝ Ս. Ալբունյան
 Սրբագրիչ՝ Ա. Գասպարյան



12243

ԳԻՆԸ 1 Ռ.

С к а з к а
О Ромашке и о Светлячке
Гиз Арм. ССР. Ереван, 1937